



ԴԺՈՒՍԱՅԻՆ ՊԱՅՄԱՆ

(Կեանքից մի առակ):

Մեր Մարկոս աղան մի հարուստ մարդ էր,
Ամբողջ քաղաքին ոչ պակաս լալտնի
Իւր ժըլատութեամբ:

Ինքը նիհար էր, թող կազմուածքով
Եւ ոչ էլ տընքան բարձր հասակով.
Գըլուխը փոքրիկ, տափակ և տձև,
Ծածկուած էր խուղած, կարճլիկ մազերով
Խառն սպիտակով.

Ճակատն էլ նեղ էր և քիչ լետ ընկած.
Երկու լոնքն իրար պ'նդ կըպած էին.
Աչքերը մանր, անփալլ, քիչ դեղնած,
Իւրեանց բընկրում խոր ընկած էին,
Որոնց կողերը չէին դադարում,
Եւ արագ, և ստէպ բաց ու խուփ լինում:

Մի ուղիղ գըծով լոնքերի միջից
Կախուած էր երկայն սըրածալը քիթը
Եւ խիստ չորացած ալտերի տակից
Աչքի էր ընկնում մի զօլգ խոր փոսը:
Վերի շրթունքը, բերնի կողքերը
Ջարդարում էին սուր անկիւններով
Կախուած, չալացած, բարակ բեխերը.

Իսկ ներքի շուրթը խիստ դժգունացած
Եւ, կարծես, անզօր հազիւ դուրս շըջուած
Ի ցօլց էր հանում բերնի անկանոն
Փուչ, ժանիքաձև, սև առամները:

Մընտն աւելի բութ էր, դուրս պրծած,
Ականջներն էին մանր և դեղնած,
Երեսի կաշին սըպըրտնած, դժգուն.

Նորան նայելիս ամեն մարդ կասէր,

Որ չը կար մարմնում գէթ կաթիլ արիւն:

Ամենայն շարաթ միայն մի անգամ

Երեսին ինքը անելի կը տար
 Եւ այն էլ ոչ թէ միշտ կը ծուլանար,
 Ալ որ անելին շուտ չը փշանար,
 Ուսերի մօտից մէջքը ծռուած էր
 Գլուխն առաջ եկած, կուրծքը խոր ընկած,
 Իսկ փորի կողմը սաստիկ դուրս պրծած.
 Այնպէս որ կողքից նախդի աչքին՝
 Դառնում էր մի մեծ հարցական նըշան,
 (Բայց ոչ թէ հալոց, ալ եւրոպական):

Հասարակ գլխարկ ունէր նա գլխին.
 Տեղ տեղ խաւ տուած, անգամ փալ տուած
 Սերթուկ էր հագին.

Իսկ նորա տակից կարգին խունացած,
 Մոյգ սատինից էր արխալուղ հագած.
 Մէջքը կապած էր մի կաշուէ գոտի,
 Կապելու տեղը միայն արծաթի.
 Շապիկի կեղտոտ օձիքի ծալրը
 Բուսել էր վըզից, հագուստի տակից.
 Վարտիկն էլ կարճ էր նոյնպէս խունացած.
 Իսկ կոշիկները տաս տեղ կարկատած:

Բընաւորութեամբ անտանելի էր
 Դէպի այն մարդիկ, որոնք իրենից
 Այսպէս թէ այնպէս կախումն ունէին
 Եւ ընդհանրապէս կարծես նեարդալին
 Ամբողջ սխտէմը քալքալուած լինէր,
 Ձի շուտ բըռնցկող, դիրազրգիւ էր,
 Եթէ մի ինչ բան կամքին դէմ լինէր:
 Բայց ընդհակառակ միշտ սիրալիր էր,
 Թէ իւրպէսների, թէ մեծերի հետ,
 Քաղցրիկ, վախելուչ, խիստ շողոքորթող,
 Կրքերն առ երես իրեն մէջ խեղդող:

Հարստութիւնը նորա աստուածն էր,
 Իսկ դորանից դուրս կեանքը գին չունէր...
 Ինչքան էլ որ փող ստանալիս լինէր,
 Միշտ քիչ էր թըրում, չնչին երեսում,
 Բայց երբ իւր ձեռքից դուրս գալիս լինէր,
 Ոչ թէ մանէթներ, անգամ կոպէկներ,
 Կարծում էր իւր ողջ կարողութիւնը,
 Նոյն իսկ իւր հոգին դուրս տալիս լինէր:

Դեռ մանկութիւնից նա շատ էր լսել
 Մօրից ու տատից դէռ հեքեաթներ
 Եւ հիմա էլ էր գըլխում մընացել
 Չարքերի մասին շատ առասպելներ:
 Եւ ընդհանրապէս նա տրամադիր էր

Հաւատ ընծայել թէ մուլաների,
 Թէ գէրվիշների, թէ կախարգների
 Ու գրբացների
 Արած գրբերին, թովչութիւններին—
 Սընօտի, անմիտ, լիմար բաներին.
 Ջահել ժամանակ սիրելցընել էր
 Գորանցով վերան շատ աղջիկներին...

Սրբէք ձախ ոտով չէր կանգնիլ տեղից,
 Կօշիկ կը հագնէր միշտ նախ աջ ոտից.
 Տանից դուրս գալիս՝ աջ ոտն էր զցում,
 Շէմքից մտնելիս նորն ոտով անցնում.
 Բան կամ փող տալիս՝ ձախ ձեռքով կը տար,
 Իսկ ընդունելիս՝ աջով կըստանար.
 Իսկ եթէ լանկարծ մի օր սխալուէր,
 Անլաջող նշան պիտի համարուէր:

Սա շէնք էր շինում
 Մի մեծ, հոյակապ. որից լուս ունէր
 Առատ եկամուտ՝ մօտ ասպագալում՝
 Կորդել աջ ու ձախ:

Արեւը չ'եւած՝ զարթնում էր տեղից,
 Իսկոյն լուացուում, հրապարակ հասնում,
 Որմնադիր, մըշակ շտապելով վարձում,
 Տուն վազեցընում.

Որպէս զի առաջ սովորականից
 Աշխատէր գործը ըսկըսած լինել,
 Բոպէն 'ի դուր տեղ անց չը կացընել
 Եւ բանւորներին շուտ բանի զընել.
 Իսկ ամբողջ օրը նորանց տանջում էր.
 Շարունակ կամ այս, կամ այն բանւորի
 Օձիքից բռնում,

Կըսիւ հախոյանք, ինչ ասես թափում,
 Թէ քնչի համար խիստ ծանր են շարժում,
 Ինչի չեն արագ գործը կատարում:
 —Քու տունը քանդուի, գողում էր մէկին,
 Ախր մինչև Յրբ դու հոգիս հանես.
 Այգպէս բաներով քնչ պիտի լինես,
 Որ գործին օգնես:

Յրկորորդի ձեռքից բահը խըլում էր
 Եւ նորն իսկ բահով նորան ջարդում էր,
 Թէ ինչի համար ցեխ բաժանելիս՝
 Քիչ քիչ է հանում, թաքախններն անում,
 Գործը լետ գըցում:

Երբորդի վրզին բըռնցքով խփում,

Մէջքին հարուածում:

Որ նա չի բանում, այլ խաղ է անում,
կամ գնալ գալիս՝ այնպէս է քալում
կարծես ոտքի տակ ձու է փխլում:
Իսկ երբ որ նորանք հացի են նստում
կամ կէս օրերին քիչ հանգատանում,

Չիրուխներ քաշում:

Մարիոսը նորանց հանգիստ չէր տալիս.
Խեղճերին կուով ոտքի կանգնեցնում,
Տուր ու դմբոցով իւր գործին դընում:

Ախր, ա՛յ աղա, էդպէս որ բանենք,
Ինչպէս որ դու ես մեզնից պահանջում,
Չենք կարող անգամ կէս օրին հասնենք,

Որ վեր չը թափուինք:

Իսկ այդ խղճալի մարդկանց բողոքին,
Իբրև պատասխան՝ լիշոցներն էին:

Այդ էր պատճառը, որ մշակները

Որբա մօտ մի օր բանելուց լետուց,

Երբէք միւս անգամ չէին բռնուիլ,

Ալ կաշխատէին, որքան հնար էր

Նորա աչքերից միշտ հեռու փախչիլ:

Այսպիսով ազան չէնքը շինում էր.

Ամեն օր նոր նոր բանւորներ վարձում.

Կռուով, դավիով իւր էշն էր քշում

Ու արածն անում:

Բայց մի բան որ նա չէր կարում մարսել—

Այդ երեկոյեան ժամերի զանգն էր.

Որ արեգակը դեռ մայր չը մըտած՝

Հնչում էր, հնչում և ժամ էր կանչում

Հալ ժողովրդին:

Աղան այնքան էլ ջերմեանդ մարդ չէր,

Որ ժամ շտապէր գործը կէս թողած:

Գանձանակ գրցէր, կամ զուգ մոմ վառէր,

Իւր և իւրայնոց համար աղօթէր:

Ցաւալին այն էր,

Որ այդ զանգերի վաղհաս հնչիւնը

Միշտ և հանապաղ պատճառ էր լինում

Ամբողջ քաղաքի ողջ բանւորներին

Գործադուլ լինել, վարձերն ըստանալ,

Տըները գընալ:

Եւ նա մըտածեց դորա գէմն առնել:

Ողջ եկեղեցեաց քահանաներին,

Երեցփոխներին և ժամկոչներին,
Մէկ մէկ նա տեսաւ, ամենքին խնդրեց,
Կաշառք խոստացաւ, որ երեկոյեան
Չանգերը մի ժամ գոնէ լեռ գըցեն:

Ոչ խնդիրք, կաշառք, ոչ էլ աղաչանք
Լըսելի եղան պաշտօնեաներին.
Երեկոները զանգը ճիշտ ժամին

Միշտ հնչում էին
Ու բանւորներին գործադուլ անում:

Մեր Մարկոս աղան շատ այս կողմ, այն կողմ
Ընկաւ ու ամեն հընար գործ գըրեց
Բոլորն ապարդիւն:

Եւ մինչև անգամ,
Որ մըշակները աւելորդ բանեն,
Կըռիւ, հայհոյանք, լիշոց էր թափում,
Դեռ վերջն էլ նորանց վարձերից կտրում,
Ճանապարհ դընում:

Բայց զանգը տալուց մի բոպէ աւել
Չէր կարողանում գէթ բանեցընել:

Այո, չէր մարսում այն հանգամանքը,
Որ բանւորներն օրով են վարձուում,
Օրուայ վարձ ստանում,

Բայց բանածները մինչև զանգերն են:
Իսկ զանգից լետոյ տարի է անցնում
Մինչև արևը ճիշտ մայր է մտնում:

Այն էլ ի՞նչ բանել—

Առաւօտուանից դեռ ոչինչ չարած,
Արդէն նստում են հացերն ուտելու,
Կէս օրից լետոյ դարձեալ նստոտում
Ու գազանի պէս կրկին շաց լափում,
Երկար մեկնում ու հանգստանում.
Որից լետոյ էլ՝ տըղամարդ պիտի,
Որ վեր կացընի ու գործի գընի:
Իսկ արածները.— մի շատ չնչին բան.
Քըլունգը ձեռքին կամ փոս են քանդում,
Բահով, թիակով հողը դուրս գըցում,
Կամ քար են կրում, կամ ցեխ են տանում,
Կամ ցեխ շաղախում, կամ կիր պատրաստում,
Օր անց կացընում:

Այն էլ ի՞նչ օրեր. անպիտի օրեր,
Որ մարդ չ'իմանում, թէ՛ երբ լուսացաւ,
Ե՛րբ բանւորն եկաւ, ինչպէս օրն անցաւ.
Եւ դեռ չը մըթնած, զանգերի ձայնից
Ականջ խըլացաւ:

«Ո՛ւր է, տէր Աստուած, արդարութիւնը,
Մշտածուժ էր նա հօգով զրդովուած,
Ինչո՞ւ այսպէս շուտ անցնում է օրը
Եւ փողս գրնում անվերջ ու սուստ,
Իսկ գործս դարձեալ մընում է կիսատ:
Ախր մինչև երբ»:

Այսպէս մտքերով այրուած, զեղբուրուած,
Հընար էր փնտում զանդն լետ զըցելու...
Եւ լանկարծ մի միտք, մի լուսաւոր միտք
Փայլում է գրլիում իբրև արեգակ,
Մշտաբերում է գրբաց Ասլանին,
Ամենակարող հընարագէտին,
Նա իւր գրքերով ու թըլխմներով
Հրաշքներ է գործում: Ամենք գիտեն:
Եւ նա սրօշկց գիմել Ասլանին:

II

Գրբաց Ասլանը մի ուրիշ մարդ էր.
Արտաքին տեսքով, բընասորութեամբ,
Ինքը միջհասակ, մագերն ալեխառն
Մինչև ուսերը երկայն բաց թողած,
Գըթի վերնում մի մեծ կեռ տուած,
Շրթունքի վերայ հաստ բեխ ուղրած.
Թով միրուք, կարծիլիկ, սանր չը տեսած,
Թուխ դէմքի վերայ կնճիւռներ պատած:

Գըլխին զընում էր վախախ մորթիլից,
Տեղ տեղ բուրդերը վեր տուած ցեցից.
Հագած էր շուխայ երկայն փեշերով
Եւ կապած մէջքը շորէ գոտիով.
Գոտուց քիչ վերև, չուխալի տակից,
Կուրծքը ծածկում էր արխալուղ չըթից.
Չուխալից ներքև՝ աչքի էր ընկնում
Լայն կարճ շալուարը, որ ոտքն էր ծածկում.
Ոտերն հագած էր նախշուն գուլպաներ,
Երկայն, կեռ ծալրով կոպիտ մաշիկներ:

Չախ ձեռքին ունէր սև տէրողորմեա,
Իսկ աջում բռնած հաստ կոպալ փալտեալ
Կուրծքի ձախ կողմից, չուխալի տակից
Միշտ մի կաշուէկաղմ գիրք էր երևում.
Իսկ արխալուղի աջ, խոր գրպանից՝
Հարկաւոր դէպքում՝ գրիչ թանաք հանում.
Աչքերից, դէմքից մերթ երևում էր,
Իբրը ասուշ էր, կիսախեղագար,

Մերթ խելօք, խոհուն, հեռատես, զգուշ-
 Բաց ընդհանրապէս խիստ ճարպիկ մարդ էր.
 Պշտոր ջրերերում գիտէր ձուկ որսալ.
 Գիտէր որտեղից, ինչ հոտ էր փըշում
 Ու ախպէս վառուում:

Սա էր Մարկոսի լոյս, ապաւէնը.
 Երբ համողում էր, որ եթէ կար ճար,
 Միայն Ասլանը կանէր մի հընար:
 Նա դիմեց նորան:

Եւ Մարկոս աղան նորա սուն մըտաւ,
 Նա նստած տեղից խկոյն վեր թըռաւ,
 Խորամանկ ժպտով նստել հրաւիրեց,
 Իսկ ինքը խոնարհ առջևը կանգնեց.

Ասլան ախպերը, երբ որ իմացաւ
 Մարկոս աղալի գալու պատճառը՝
 Յօնքերը կիտեց.

Լուրջ, խոհուն կերպով չափ ու ձև արեց.
 Խորհեց, մըտածեց, հաշիւներ արեց.
 Գրքերը նայեց. անէծքներ կարդաց.
 Քալկեց. կանգ առաւ ու կրկին քալկեց,
 Անհասկանալի բառեր մըթմըթաց...

Ապա, իբր թէ անլալտ ուժերի
 Հետ նա բռնուեց ու կռիւ մըղեց.—
 Աչքերը չըռեց, սաստիկ զայրացաւ,
 Թըքեց օդի մէջ, բռունցքներ ցոյց տուեց...
 Խնդրեց. բարկացաւ. դառն ու գալլ դարձաւ.
 Բոլորը ի դուր:

Յետոյ ապշացաւ մի քանի րոպէ.
 Յետոյ լըջացաւ, գըլուխը բռնեց
 Ու Մարկոս աղին անհանդիստ ասեց.

—Շատ դժուար բանի դու ինձ բանդ արիք.

Երգուում եմ քո մօտ, որ իմ կեանքումս
 Այսպէս պահանջի դեռ պատահած չեմ,
 Աշխարհում չը կար դեռ ախպիսի դործ,
 Որ իմ ուժերից բարձր բան լինէր.
 Բաց երեկուեան զանգակներ տալը
 Մի երկու ժամով դոնէ լետ գըրցել—
 Օր երկարացնել—առաջին դէպքն է
 Եւ անկարելի:

—Ինչ որ քու հախն է, ջուխտ աչքիս վերայ,
 Ասաց Մարկոսը. միայն ճար արա.
 Գոնէ չորս հինգ ժամ ժամերն ուշանան,
 Որ բանուորներն աւելի բանեն:

Ու սովորական վարձերն ըստանան:

— Բայց գիտես, աղա, ինչ ես ինձ լանձնում:

Ինչ դժուար խնդիր ես առաջս դրնում:
Ամբողջ դժոխքը պիտի շրփոթուի,
Իմ գէմըս կանգնի:

Որովհետեւ ես այդ բանի համար՝
Պէտք է գործ դրնեմ ուրիշ ճանապարհ,
Ուրիշ միջոցներ,

Քէն աշխարհը տակն ու վրայ լինէր...
Ես պէտք է հանեմ խորքից զևերի
Անհամար գնդեր, մեծ մեծ լէզիօններ,
Որ արեգական չորս կողմը պատեն,
Նորա ընթացքը դանդաղեցընեն,

Օրերն երկարեն:

— Միթէ այդպէս բան կարող է լինել:

— Ինչո՞ւ չէ Յեսու՛ն մի քանի ժամով

Միթէ արեւին չ'ստիպեց կանգնել:

Եւ միթէ սուրբ Գիրք՝ դու չես կարդացել:

Իսկ ես, ի հարկէ, չեմ կարող անել

Այն՝ ինչ որ Յեսու Նաւեան էր արել,

Այլ պիտ' աշխատեմ, որ ինձ լաջողուի

Արեն իւր շաւղում մի քիչ լետ ընկնի:

Բայց չը մոռանաս, որ դորա համար

Ուժերիցս վեր պիտի մաքառեմ

Եւ գերբընական խիստ տանջանքներով

Գործող գլուխ բերեմ:

Յոստովանում եմ, շատ դժուար գործ է,

Աւելի դժուար, քան պիտի կարծել:

Բայց ես իմ ուժով—մեծ արուեստովս էլ

Ու երակ չեմ կարող, եթէ դու չ'օգնես:

Պէտք է քո կողմից դու էլ գործ դրնես

Կամք և աշխատանք, որ քեզնից է կախ:

— Շատ լաւ, շատ բարի. ես համաձայն եմ:

Ինչո՞ւն է բանը, շուտ ասա տեսնեմ

Եթէ իմ խելքի, իմ ուժի բան է:

Ես քեզ օգնելու հոգով պատրաստ եմ:

— Այսինքն սչի՛նչ. մի շատ չնչին բան:

Դու պէտք է միայն բանուորներդ հետ

Ամբողջ օրերով հաւասար բանես,

Այդպիսով օգնես:

— Հէնց միմիայն անդ. տունդ չը քանդուի,

Ես էլ վախեցալ թէ քնչ պիտ' ասես:

Եթէ դորանով գործ գըլուխ կը գալ՝

Ինչքի չէ, ինչքի, ինչքի չեմ բանի,
Մի մըշակի շափ միթէ չեմ կարող
(Սրերով բանել)

Նորանք ինձանից ինչով են աւել
— Եթէ այդպէս է, պատասխան տուց
Շատ խորհրդաւոր՝ գրբաց Ասլանը,
Հազիւ ծածկելով կինճոտ երեսից՝
Իւր սրտի գաղտնի ուրախութիւնը.
Եթէ այդպէս է կարող կը լինեմ
Ամբողջ դըժոխքը տակն ու վրայ անել
Եւ արեգական արագ շարժումը
Գանդաղեցընել:

Դարձեալ մի պայման. կրկնում եմ, կրկնում,
Որ դու խոստմանդ պիտ' լինիս շատ ճիշտ.
Իսկ եթէ մի կերպ լոգնես, ծուլանաս,
Քեզ ու ինձ խարես, խօսքդ ուրանաս,
Երդում եմ, ամբողջ դըժոխքը քո դէմ
Ատի կը հանես,
Եւ ահա ինչպէս:

Դու գիշերները քուն չես ունենալ.
Բիւրաւոր ոգիք վերագ կը թափեն.
Քեզ խիստ կը ճնշեն, կուրծքդ կը սեղմեն.
Վիզդ հուպ կը տան, շունչդ կը կտրեն
Եւ կ'թպրտաս անվերջ գիշերներ,
Մինչ արեգական լուսը կը ծագէր...
Իսկ ցերեկները դիւաց լեզիօններ
Արևից կախուած շուրջդ կ'օրորուեն
Եւ քեզ գիպչելով, հրեղէն նետերով
Ամբողջ մարմինդ կը ծակծրկոտեն.
Եւ նորանց անվերջ սաստիկ տուրքը,
Գոռում գոչիւնը, անէծք, լիշոցը.
Քեզ կը խըլացնեն, կը սարսափեցնեն,
Մինչ խելագարման օրին հասցընեն.
Քառասնօրից լիտ՝ եօթն օր, եօթ գիշեր՝
Աննկատելի կուպրով քեզ կ'օծեն,
Լուսով արևի քեզ կըրակ կը տան
Եւ կալրուես անչէջ միշտ և լաւիտեան,
Բոլոր ոսկիւրդ էլ մոխիր կը դառնան.
Դու քո շինութեանցդ փըլատակների
Վերայ կը շրջես անլուս, անկենդան,
Իբրև մշտավառ պրոտոզ ուրուական ..
Ել այն ժամանակ հընար չի լինի
Դորա դէմն .. ունել
Չար ոգիներին, դիւաց լեզիօնին

Գէթ սանձահարել, հանդստացընել,
 Ուրեմն դու քու խիստ կամքով, Զանքով,
 Պիտի լաջողիս անշուշտ դիմադրել,
 Թլիսմներիս օղնել:

Միայն մի բան էլ պիտի լմանաս,
 Իմ պարտքս է լալտնել, որ զգուշանաս.
 Պթէ ամբողջ օր, անշուշտ ամբողջ օր
 Գործելուց լետով՝

Տեսար թուլացար, շատ դժուարացար
 Եւ միւս օրերը բանել չուզեցար,
 Նոյն երեկոյին, մութը չը մթնած,
 Պիտի ինձ մօտ գաս՝ դորա դէմն առնում,
 Սրերն առաջուկ դիրքի մէջ դընեմ.
 Որպէս զի պրծնես ամեն փորձանքից
 Ու քեզ ազատես չար գերութիւնից,
 Անվերջ ցաւերից:

Եւ Մարկոս աղան, կարծես, վախեցաւ,
 Պարծես, մարմնովը մի սարսուռ անցաւ...
 Պարծես ոյժերը չափ ու ձև արեց,
 Իւր առողջութեան թիւր աչքով նայեց...
 Խորհեց... մըտածեց...

Քայց ապագայի մեծ մեծ շահերը,
 Ոսկէ սարերը
 Դլխում շարուեցին, ահը խեղդեցին,
 Կասկածանքները օղը ցնդուեցին.
 —So դու բանիդ կայց. ճար ունես, արա.

Ես երեխայ չեմ քեզ ու ինձ խաբեմ.
 Եթէ մի մըշակ ուժերից ընկած,
 Պարող է ամբողջ օրերով բանել,
 Ինչք ես պիտի, ինքս լաւ պահուած,
 Չը կարողանամ աւել էլ բանել.
 Չէ իմ օգուտն է.

Դեռ մի մըշակ էլ պակաս կը բռնեմ
 Ու նորա վարձը ջէքս կը գըցեմ.
 Պայմանն, ի հարկէ, հեշտ ելք չունեցաւ.

Երեսուն բուրլին՝ տասով վերջացաւ.
 Իսկ տասից կէսն էլ իւր վարձը հանեց,
 Իւր գործակցութեան պատճառը բերեց,
 Ու մի հնգանոց Աւլանին տուեց.

Թէպէտ զրբացը շատ չանալ թաւեց,
 Քայց Մարկոս աղան մի մազ չը չեղեց.
 Գիտցածը արեց.
 Իւր խելքով խաբեց:

Հետեանալ օրը, միևնորն ժամին,
Մեր Մարկոս աղան Ասլանի առաջ
Ուրախ կանգնած էր:

Ասլանը հանեց
Իւր գրպաններէց՝ եռանկկունածալ
Երեքհատ թըլիսմ և նորան տուեց,
Մէկ մէկ ցոյց տալով, խիստ պատուիրելով:
Որ մէկը, մեծը ճիշտ կէս գիշերին,
Երեսով անշուշտ դարձած արեկելք,
Իւր դարպասի տակ փոքրիկ փոս քանդի
Եւ մէջը դընի, հողով պինդ լըցնի,
Որ մարդ չը տեսնի:

Միւսը, միջակը, պարտիզի բակի
Մէջ տեղը դանի ու այնտեղ հորի:
Միայն երեսը դէպի արեմուտք

Դարձրած լինի:

Երրորդն էլ, փոքրը—լաւ ուշք դարձընի—
Տուն գընալ թէ չէ՝ փոքրիկ թասի մէջ
Կիսով ջուր ածի, դրսումը դընի
Եւ երեք անգամ լուսնի առաջին
Թըլիսմը բռնի, մէջը թաթախի:
Աչքերը գըցի բոլոր աստղերին
Եւ միջի մատով ջրի տակ անի
Սւ այնպէս թողնի մինչև առաւօտ
Իսկ այնուհետև լոյսը նոր ծագած,
Թասի ջուրն ամբողջ խմի կումերով,
Լուսնին դարձրած լինի երեսով,
Յետոյ թըլիսմը և՛ թաց, և՛ կակղած,
Գըցի կրակի մէջ ու այնպէս ալրի,
Նորա մոխիրն էլ վաղ արշալուսին

Օդի մէջ գրուի,

Իսկ լետոյ գընաց բանուորներ վարձի,
Ինքն էլ նորանց հետ բանել ըսկըսի:
Լևելացրեց, որ ամբողջ գիշեր
Եւ ամբողջ ցերեկ, մինչ նորա գալը,
Քուն չէ ունեցել:

Շարունակ կռուի ու պատերազմի
Մէջ է գտնուել, դրժոխքը խառնել:

Ինչ ասել կուզէ, մեր Մարկոս աղան—
Մաղաչափ անգամ ղէս ու դէն չարեց
Եւ ամենայն ինչ մեծ ճարպիկութեամբ
Տեղից տեղ արեց ու հանդիստ քընեց:

III

Շատ վաղ առաւօտ, դեռ նոր լուս ծագած,

Խւր անելիքը անելուց լետոյ,
Հրապարակում պատրաստ էր կանգնած
Եւ բանուտրները հաւաքուելուն պէս՝
Մէկ մէկ նա վարձեց ու առաջն ընկած՝
Իսկոյն տուն բերեց ու գործի դըրեց,
Իսկ ինքը գընաց, հագուստը փոխեց
Հագաւ իւր պահած հին հին շորերը,

Յնցոտիները

Եւ իսկոյն հասաւ—գործից լետ չընկնի,
Պայմանն անթերի և ճիշտ կատարի:

Վէր առաւ մի լաւ սուր ծալրով՝ քըլունդ,

Սկրսեց քանդել քարոտ գետինը

Եւ թթի տակին կուշտ ծիծաղելով

Յիշեց Ասլանի կրած երկիւղը.

«Ինչ կալ ասում էր նա ինքըն իրան

Ինչի չեմ կարող սորանց չափ բանել.

Գետին քանդելը, բահ գործ ածելը,

Միթէ առանձին մի մեծ հունար է:

Մի փոքր անցաւ:

Երբ աչքը գըցեց Չեւմ արեգակին,

Տեսաւ նոյն տեղում անչարժ կանգնած էր:

Կարծես, երկնքից նա պինդ մեխուած էր:

«Կեցցես դու, Ասլան, մրտածեց աղան,

Ի՞նչ ուստալ մարդ ես, ի՞նչ հունարի տէր,

Ի՞նչպէս կարեցար օրը լետ գըցել

Ու արեգակին տեղում քանդ անել.

Դու չը լինէիր՝ հիմալ այս օրը

Դարձել էր կէս օր:

Թունդ առաւ սիրտը ուրախութիւնից,

Կրկին և կրկին քըլունդի տուեց.

Գեղեցիկ մտքեր, շահաւէտ մտքեր

Իրար ետեից գնում գալիս էին,

Նորա գլխի մէջ խռնուում էին...

Նա մեծ աշխուժով քըլունդ էր բանեցնում

Եւ հող ու քարը իրար հետ խառնում,

Քանդում, փոս դըրում:

Հնչում էր քըլունդը, ճռնչում, զնգում,

Քարին կալելիս՝ կալծեր արձակում,

Գետին դըրդում, տակն ու վրայ անում:

Քարերը, խիճը, հողում ամրացած,

Շատ ու շատ դարեր իրար պինդ կըպած,

Այսօր Մարկոսի քըլունգի տակին,
 Իբրև հիւէներ մըրկի միջին՝
 Քուշում, ոսոսստում, խառնում, փլչում,
 Իբար ին դիպչում:

Երբէք չէր ընկել քունգն ալալիսի
 Հաստատ, անլողողոյ, ժիր ճանդերի մէջ,
 Որ իւր միջոցով, կարճ ժամանակում՝
 Քանդէր, փոս դըցէր և տեղ բաց անէր:

Նա կարծում էր թէ ալալէս եռանդով,
 Լի և թարմ ուժով,

Օրը մինչև վերջ կարող էր բանել
 Եւ մըշակներին իւր գործով, ջանքով
 Մի լաւ օրինակ անշուշտ կը լինէր:
 Բաց չէր մըտածում, որ հէնց սկզբից
 Իւր ողջ ուժերը քաքսում էր, վատնում,
 Հիւքից կործանում,
 Զեռք ոտքից ընկնում:

Եւ նա բանում էր, բանում աշխուժով,
 Առանց զգալու, որ իւր ուժերը,
 Քանի գընում էր, թուլանում էին...

Շատ բանեց թէ քիչ, ինքն էլ չը գիտէր:
 Միայն զգաց, որ արդէն լոգնել էր:

Այո, լոգնել էր մեր Մարկոս աղան,
 Կարծես, մարմինը քիչ քիչ դողում էր
 Եւ ձեռք ու ոտքը դաւածանում էր...
 Անցաւ մի միջոց և դարձեալ, կրկին
 Նա աչքը գըցեց երկնից լուսատուին,
 Տեսաւ որ հաղիւ շարժուել է տեղից—
 Մի ծանր հողոց հանեց իւր կրծքից
 Ու դարձաւ ասաց նա մըշակներին:

— Տղերք, ինչի չէք նստում ձեր հացին:

— Դեռ ժամանակ կալ, մի քիչ էլ բանենք,

Յետոյ կը նստենք, հացներս կուտենք:

Տես, արեգակը դեռ չէ տեղն եկել,

Որ բանթող լինենք:

Լըռեց Մարկոսը, ոչինչ չը խօսեց,
 Բաց իւր ներսումը, կարծես, ափսոսեց,
 «Որ արեգակը դեռ չէր տեղն եկել»,
 Հանգիստը բերել:

Նա շարունակեց քըլունգի տալը...
 Բաց... բաց քըլունգը, քանի գընում էր,
 Այնքան ծանրանում

Եւ, կարծես, ձեռքի ուժը պակասում,
 Գործը դանդաղում...
 Քըլունդն ալ ևս չէր կպչում տեղին
 Փոխանակ հողին, դիպչում էր քարին
 Ու կայծ արձակում:
 Յետոյ սկըսեց ոչ ծարրով դիպչել.
 Ալ մինչ իջնելը, գետնին կպչելը,
 Կողքով վայր ընկնել, ղուր ջանք ըսպտուել...
 Առաջին անգամ մեր Մարկոս աղան
 Մատով ճակատից քրտինքը թափեց.—
 Քրտինք տանջանքի, դառն աշխատանքի,
 Որ այսօր, ահա, կամաւ ճաշակեց.
 Վայր դըրեց քլունդը, բարձրացաւ տեղից
 Եւ ծռուած մէջքը չէր ուղղում ցաւից.
 Քիչ հանգիստ առաւ.
 Բալց պիտի բանէր, իրաւունք չունէր
 Հանգիստ առնելու.
 Եւ նա բանում էր,
 Բալց թող այդ Աստուած բանել համարէր.
 Շարունակ աչքը լողնածու թիւնից՝
 Քըցում էր հազիւ շարժող արևին,
 Անհամբեր սրտով ըսպառում էր նա
 «Արեւ տեղ դար» և գլթ մի փոքր
 Հացի պատճառով նա հանգստանար.
 Թէև ամեն օր՝ մինչ նախահաշը՝
 Քոնէ երկու ժամ չէր տևում անցնում,
 Իսկ այսօր գուցէ հինգ ժամ է անցել
 Եւ «դեռ արեւ տեղը չի եկել»...
 Ահա վերջապէս
 Վարպետը պատից վայր իջաւ, եկաւ
 Ու բանուորները դորձադուլ եղան,
 Ձեռքերը լուացին, հացի նստեցան.
 Խոր հոգոցի հետ մեր Մարկոս աղան
 Քլունդը շարտեց
 Կըռացած մէջքը մի կերպով դըզեց
 Եւ դէպի իւր տուն քայլերըն ուղղեց.
 Բալց ինչ...այ գարմանք... ոտքը դողում է...
 Դժուարանում է դէպի տուն երթալ...
 Կարծես, ոտքի տակ հողն օրորում է,
 Կարծես երկրաշարժ է առաջ եկած.
 Նա մի կանգ առաւ, նայեց իւր շուրջը,
 Նայեց վարպետին ու բանուորներին,
 Որոնք նստոտած հացերն առաջին
 Մեծ ախորժակով կուշտ ուտում էին.

Նալեց, ամաչեց ինքը իրենից,
Ուժը ժողովեց, իրեն տուն գըցեց:

IV

— Ինչ ճաշի վախտ է, ճաշը պատրաստ է
Դեռ առաւօտ է, ասացին նորան.

Այսպէս ժամանակ դու երբ ես ճաշել
Ինչ է պատահել:

— Ի սէր Աստուծոյ մի երկարացրէք,
Գոնէ մի կտոր հաց ինձ շուտ բերէք.
Ձուից, մածունից, կաթից ինչ որ կա,
Կուշտ նախանշի ինձ շատ կարիք կա:

Ինչ որ կար տանը ձեռաց բերեցին
Եւ մեծ զարմանքով հացը գըցեցին,
Եւ Մարկոս աղան զողոջուն ձեռքով
Վրայ տուեց հացին, կերաւ գալլի պէս,
Առանց նախելու, ինչ որ զըրած էր:

Նոր ոյժ հաւաքեց, բեխերը սրբեց,
Կրկին բանելու կարծեա պատրաստուեց.
Ի՛սպ կամեցաւ նախ՝ մի հանգիստ առնէր
Եւ նոր աշխուժով իւր գործն ըսկսէր:

Նալեց դէպի դուրս՝ բաց լուսամուտից,
Տեսաւ որ արդէն գործը ետում է,
Ամեն մի բանւոր իւր բանին կանգնած,
Ուժով, եռանդով խիստ աշխատում է:

«Ճշմարիտ որ այս անասունները,
Խօսքը մէկ արած, իմ դէմ են գործում.
Ամեն օր մինչև հացը կուտէին,

Վերուխ քաշէին
Ու վեր կենալին իրենց տեղերից — ժամեր կը քաշեր».

Մինչ գործ սկսէին՝
Հողուց, հաւատից ինձ կը հանէին.
Իսկ այսօր հացը կարգին չը կերած,
Արդէն ամեն մարդ բանի է կանգնած»:

Յիշեց Ասլանի զըրած պարմանը,
Որ «նրանց հետ պիտի հաւասար բանէր»
Էլ հանգստանալու ճար, միջոց չունէր.
Վախից, երկիւղից տանից դուրս թըռաւ,
Շինութեան տեղը վազեմլազ հասաւ:

Հիմա քըլունգը նա մի կողմ թողեց
Եւ առաւ բա՛ր մըշակի ձեռքից,

Մօտեցաւ ցեխին, բահով շուռ տուեց
 Ու մշակներին ցեխեր բաժանեց,
 Եւ տեսաւ որ չէ, այս գործն էլ հեշտ չէ.
 Թեթեւ է թուում հեռուից նալողին.
 Ամին մի բահը ցեխով հանելիս՝
 Ուժ է պահանջում ու լողնեցընում
 Եւ հետզհետէ ուժ սպառեցընում:
 Նամանաւանդ որ չէր կարողանում,
 Գէթ ազատ շարժուել, բահ բանեցընել.
 Ձեռքի, ոտների մըկանունքները
 Խոնջացել էին, թուլցել, լամբացել,
 Ազատ շարժումը դանդաղացըրել,
 Դժուարեցըրել:

Բայց լաւ էր. մի քիչ գործելուց լետով,
 Մկանունքները, կարծես, բացուեցան,
 Ազան սիրտ առաւ և իբր աշխուժով
 Ըսկըսեց բանել
 Ու մըշակներին ցեխեր բաժանել:

«Ղ՛մ, մտածեց նա, գործի սկիզբը
 Անխորձի համար դժուար է թուում,
 Հալ ու մաշ անում, հողին դուրս քաշում,
 Բայց երբ առաջին լողնածութիւնը
 Յաղթահարում է, անցնում է, զընում,
 Մարդ շունչ է քաշում, նոր բանի ընկնումս:
 Մարկոսի մտքով շատ բաներ անցան,
 Օղի ամրոցներ զըլխում շարուեցան.
 Ուրախ գրգիռը թե, թիկունք դարձաւ
 Ու մի ժամանակ իրան մոռացաւ...»

— Աղա, ցեխ տուր է, ինչի կանգնեցիր—
 էս մի սնաթ ա, դու մեզ բանդ արիր.
 Ուստի դուոցը միթէ չես լսում.
 Նա մեզ վերայ է, ախր, բարկանում:
 Արթնեց Մարկոսը իր ցնորքներից
 Բաղցրիկ մտքերը, մեծ մեծ լուսերը
 Ողբ ցնդուեցին,
 Իրականութեան դէմ առ դէմ կանգնեց
 Եւ գործի շարժուեց...
 Խըրեց իւր բահը, որ ցեխ հանէր, տար.
 Բայց բահը ցեխից չէր ուզում դուրս գոր.
 Կարծես, ալ դ ցեխը սոսինձ էր դարձել
 Եւ բահին կըպել
 Բաշում է բահը, ուժը չի պատում,
 Մանրացել էր նա. իսկ դուրս քաշելիս՝

Թող ձեռքի միջից՝ կօթն էր սօթ տալիս...

Չգատացաւ, մի կերպ ուժը հաւաքեց
 Եւ բանւորներին ցեխեր բաժանեց:
 Իսկ լետնը... լետնը... այնամենայնիւ
 Բահը չէր բանում, զօր էր պահանջում,
 Իսկ զօր զընկիս՝ ձեռք ու ոտք դողում,
 Ամբողջ թուլանում...

Հեղեղ էր դարձել նորա քրտինքը՝
 Քափում էր գլխից, մազերի քոքից,
 Կաթում էր գետնին քթի սուր ծալրից,
 Վըղողն անցնում էր մէջք ու կուրծք զընում,
 Առանց այն էլ թաց շորերում ծծում,
 Գողորջխանում,
 Իսկ ալդ գողորջուց շունչը կարում...

Մի քանի անգամ փորձեց ծնկները
 Իւր բահի համար շինել լենակէտ
 Ու հազիւ ծալրով ցեխ էր վերցնում
 Քարախներն ածում,
 Բալդ ցեխ հանելիս՝ բահը շրջում էր
 Ու ցեխը թափում,

Կամ ցեխով բահը բարձրացընելիս՝
 Ձեռքը բացում էր, կաթր դուրս պրծնում,
 Իհար վալը ընկնում:
 Եւ կամ փոխանակ թարախ՝ մէջը
 Ցեխը զընելու, անպիտան բահը,
 Կարծես գիտութեամբ, զընում էր կողքին
 Աւ թափում գետնին:

— Աղա, լողնել ես, ասաց ծիծաղով
 Մըշակի մէկը. տուր ինձ ալդ բահը.
 Իսկ դու վեր առ տար ցեխով թարախը:
 Մարկոսը բահը մըշակին տուց.
 Ինքը նորա տեղ լուռ անցաւ, կանգնեց
 Եւ թարախով ցեխ կըրել ըսկըսեց:

Նոր գործը նորան թեթև երևաց,
 Կարծես, մի փոքր դիւրութիւն զգաց.
 Բալց... հետզհետէ... ցեխով թարախն էլ
 Նորա ձեռքերին չէր հըպատակում.
 Կամ առաջ, կամ լետ, կամ աջ և կամ ձախ
 Շրջում էր ձեռքին ու ցեխը թափում,

Այխատանք կորչում:
 Շատ էր աշխատում պինդ ձեռքով բռնել,
 Քարախի կողքը մատներով սեղմել,
 Բալց, քանի որ նա ուժ էր գործ զընում,

Աւելի շուտ էր թաքախը շրջում,
 Յեխւյ թաթախում:
 Եւ ասամեկը միմեանց պինդ սեղմեց,
 Յասումը սրտի իրեն մէջ խեղդեց,
 Թաքախը թողեց, քարին ձեռք դարկեց
 Ու քարեր կըրեց:

Նրեց շատ թէ քիչ, ինքն էլ չը գիտէր—
 Միայն իւր խելքով տեկց շատ ժամեր—
 Ժամեր դառնալից, անվերջ անսաման,
 Աւախտենական:

Նա կարծում էր թէ այլքան ժամանակ
 Սարեր շուռ տուեց, տեղան արեց,
 Բայց կըրած քարին երբ աչքը գըցեց,
 Գըլուխը շարժեց ու հիասթափուեց:
 Ո՛րքան աննշան էր իւր արածը,
 Ո՛րքան չնչին էր քարեր կըրածը:
 Ամեն մի մըշակ երրակի աւել,
 Քան թէ նա ինքը, գործ էր կատարիւ:
 Եւ ինքն իւր աչքում սրքան էր ընկնում,
 Ո՛րքան փոքրանում, սրքան խեղճանում
 Ու մըշակներից անգամ ամաչում...

Դարձեալ ըսթափուեց. պայմանը լիչեց—
 «Պիտի նորանց հետ հաւասար բանէր»:
 Կրկին և կրկին անկած ոյժերը
 Ի մի ժողովեց՝ գործ շարունակեց:

Հիմա էլ, կարծես, քարն է ծանրացել
 Ու անկիւնները մի մի սուր դարձել:
 Ձեռքերի մէջը, բուր մատները
 Քերքերուել էին, տեղ տեղ պըլօկուել,
 Խիստ զգայուն դարձել
 Ու անշարժութեան անգամ մատնուել:

Իսկ ամեն անգամ, երբ կըռանում էր
 Քար վերցընելու, տեղափոխելու
 Չէր կարողանում աղատ քարձրանալ—
 Մէջքը ջարդում էր, սաստիկ շշում էր,
 Ոտերը ցաւում, վիզը խիստ ձգում
 Եւ աչքերի մէջ, կոպերի տակից,
 Բիւրաւոր կայծեր լողում, սաւառնում,
 Գըլուխը շշում:

Ինչքան նայում էր շուտ շուտ արեին,
 Այնքան անշարժ էր թւում նա աչքին,

Նորնքան վառուում, նորնքան սրտնեղում,
 Հոգւով խորտակւում,
 Համբերութիւնից իսպառ նա զրկւում
 Հալ ու մաշ լինում:

Եւ նա չէր տեսնում, որ արեւն արդէն
 Կանգնած էր գլխին, երկնից մէջ տեղում,
 Վերան ծիծաղում

Ի՞նչ անէր աղան, ի՞նչ հընար զբանէր,
 Որ այս տանջանքից մի կերպ ազատուէր...

Բայց ոչ մի հընար, ոչ մի ճար չունէր.

Պիտի անպատճառ իւր բանը անէր,

Եթէ չէր ուզում անհաշտ դեերի

Սարսիչ զարրոյթը իւր վերայ թափէր:

Եւ իւր մէջ խեղդուած շարժում էր կիրքը,

Շարժում էր մաղձը, անսանձ զարրոյթը,

Նորէն բռնցկում, նորէն քայքայում

Ողջ գոյութիւնը:

Ամեն զըցելիս ալքը երկնքին

Միշտ հայտնում էր, լիշոյնեք տալիս,

Եւ կեղտոտ ցեխին, և ծանր քարին,

Եւ արեգակին, և խեղճ Ալախին,

Ամբողջ զըժոխքին:

Արեգակն արդէն սկսեց թեքուել,
 Երկնից կենդրոնից դէպի արեմուտք:
 Հասել էր ժամը կէս օրուայ հացի
 Եւ շուտով պէտք է բանթող լինէին.
 Բայց Մարկոս աղան այդ չէր նկատում,
 Միշտ արեգակին նոյն տեղն էր գտնում,
 Անշարժ համարում,
 Ու միայն մաղձն էր իւր վերայ թափում,
 Անվերջ սրտմըտում,
 Հոգեհան լինում:

Իսկ թէ նորա հետ ինչ պիտի լինէր,
 Եթէ բանթողը դարձեալ ուշանար,
 Առաջուց դժուար նախատեսնուէր.
 Միայն վարպետը երբ կրկին իջաւ
 Պատից, լուացուեց և բանտորները
 Հացի նստեցին:

Կարծես, աշխարհն ու անհամար ոսկիք,
 Բիւրաւոր ահունք, թանգ մարգարտներ
 Մեր Մարկոս աղին ընծայ բերեցին:

V

- Ազան դէպի տուն մի կերպ քսւշ եկաւ.
 Երբ պատշգամբին մօտեցաւ, հասաւ,
 Ջերմ արեգական ճառագայթներէց
 Ստուերի տակ մտաւ
 Եւ ալդ ստուերային շողը զովարար
 Երեսին դիպաւ,
 Կարծես, շունչ առաւ, կարծես կեանք ստացաւ,
 Ցնցուեց, շարժուեցաւ,
 Իբր թարմացաւ
 Եւ նա մըտաւ տուն, գլխարկը հանեց,
 Քրտնաթոր, խոնաւ մազերը շփեց
 Հովացած քրտինքը ճակատից սրբեց,
 Հանդստեան թառաչ խոր կրծքից հանեց
 Եւ ջարդուած, լոգնած նստեց սեղանին
 Ոյժ տալու համար վաստակած մարմնին:
 Ճաշում էր հազիւ, ծամում էր անդօր,
 Իբրև ակամայ,
 Իսկ ուշք ու միտքը, պահանջը բոլոր,
 Կենդրոնանում էր հանգստեան վերայ:
 Եւ նորա ճաշը սովատանջի չէր.
 Ալ իբրև անբան մի անասունի,
 Որը չէր ուտում, որոճ էր անում,
 Հազիւ ծընօտը ձախից աջ շարժում:
 Դեռ թիքան բերնին տեղից վեր կացաւ
 Եւ թախտի վերայ փռուեց, պառկեցաւ
 Ո՛հ, որքան քաղցր էր նորան ալդ դիրքը,
 Ի՞նչ երջանիկ էր նա ալդ ըոպէին,
 Աշխարհիս վերայ ամեն ինչ կը տար,
 Միմիայն տեղից գէթ չը շարժէին ..
 Բայց նա չէր կարող չը շարժուել տեղից,
 Դեռ պիտի դընար գործ կատարելու.
 Իւր ազանութեամբ ստեղծուած՝ ալ օրուայ
 Տանջանաց բաժակը մինչ տակ քամելու:
 Ասլանի տուած անչ ու երկիւղը
 Ցնցում էր ստէպ ստէպ նորա ուղեղը,
 Տակն ու վրայ անում,
 Հանգիստը խըլում.
 Եւ ալդ չարատանջ, անարկու մրտքից՝
 Քունը փախչում էր նորա աչքերից:
-
- Ոչ քուն, ոչ արթուն, թալկացած, ընկած
 Դըրութեան մէջ էր, երկիւղը սրտին,

Երբ ինչ խուլ ձայներ հասան ականջին —
 Ձայներ վարպետի և բանւորների,
 Որք նշան էին,
 Թէ ամեն մէկը բանին էր կանգնած:
 Ի՞նչ դժուարութեամբ վեր կացաւ, կանգնեց,
 Ատամատամի տուեց, կրքճըտեց...
 Դէպի բանատեղ իւր քայլերն ուղղեց,
 Քայլեր դողդոջուն,
 Անհաստատ, նկուն:
 Հով սենեակից դուրս, օհ, որքան տօթ էր,
 Արեգակն անհաշտ ինչպէս արուժ էր.
 Ի՞նչպէս թուլացնում, ի՞նչպէս թմրեցնում
 Եւ առանց այն էլ քաքսուած ջղերը,
 Քալքալուած նեարդներն խպառ լամբացնում:
 Ախ, այդ րոպէին ինչպէս նա կուղէր
 Կրկին մեկնուիլ, մէջքի վրայ ձգուիլ,
 Ճիշտ այնպէս ինչպէս այն թախտի վերայ,
 Ձգուել ժամերով, պառկել օրերով
 Մի պառերի տակին,
 Թէկուզ չ'ըր գետնին, վրայ ապառաժին...
 Միայն դէթ փոքր ինչ նա հանգիստ առնէր,
 Ջարդուած մարմինը մի քիչ կազդուրուէր:
 Այստեղ նա լիչեց իւր բանւորներին,
 Որք միշտ հացից լեռ աշխատում էին
 Մի ստուեր գտնել, երկար մեկնուել
 Ու հանգիստ առնել
 Եւ որ ինքն ինչպէս կուով, լիչսողով,
 Նոյն խկ ծեծելով,
 Չէր թողնում հանգչել, այլ վեր կացնում
 Եւ անգթաբար ոտքի կանգնեցնում
 Ու գործի դընում...
 Եւ բազում դէպքեր, անողոք դէպքեր
 Իւր վարմունքներից, իբրև ժապաւէն,
 Իբրև միմեանցից ապուած օղակներ,
 Գլխում շարուեցին
 Եւ մշակների հառաչանքները,
 Խնդիրք, աղաչանք, անոգօր ձայները
 Ականջովն անցան, սիրտը խալթեցին,
 Հոգին ճմլեցին...

Եւ այդ դրութեան մէջ նա պիտի բանէր:
 Ինչքն սկըսէր, ինքն էլ չգիտէր,
 Ամեն ինչ արդէն հոգուն հասել էր:
 Քլունգից վախում էր, րահից լեռ փախչում,

Քարը ձեռքերի մէջն էր ցաւացնում
 Քարախն էլ ցեխով մէջքն էր կոտրատում,
 Իսկ թիով բանել, հողը դուրս գըցել,

Ոյժ էր պահանջում...

Ակամայ կանգնեց թարախի մօտին
 Յոգնած, թալկացած ցեխ տարաւ բերեց.
 Յետոյ թարախը մի կողմ շարտեց
 Եւ ճարահատուած քարին ձեռք զարկեց.
 Քարից լետոյ էլ վեր առաւ դուլը
 Ջրով ըզբաղուեց. բայց աղեղնածե
 Դուլի երկաթն էլ ձեռքը կտրատեց...

Եւ քանիցս անգամ մտածեց թողնել,

Ոյժից վեր բեռը վըզիցը գցել,

Պայմանը դրժել,

Բայց դժոխարին վրիժառութիւնից
 Իւր անձը աղտա պահելու համար՝
 Ստիպուած էր նորից մի գործի կպնել,
 Որպէս զի զանգին գէթ մի կերպ հասնէր...
 Նա փորձեց անգամ վեր առնել թիակ
 Եւ հող դուրս գըցել. բայց այդ մտքիցն էլ
 Շուտով ստիպուեցաւ իսպառ լետ կանգնել:

Թէ ջերմութիւնից սաստիկ արեւի,
 Թէ թմրութիւնից իւր անդամների,
 Թէ կոտրատումից իւր ողնաշարի,
 Պատել էր մարմնին քափ ու քրտինքը,
 Ատելի դարձել երկինք գետինքը...

Շուտ շուտ կանգնում էր օդ էր ներշնչում,
 Գէթ օդից գտնէր նոր ոյժ, զօրութիւն.

Բայց ուր էր օդը,

Խեղդում էր սօթը,

Կտրժես, ջըլատում վերջին լուսերը:

Ամեն օրուայ պէս, կտրժես, արեւ
 Այն չէր ինչ որ էր. այլ մէկին տասը
 Աւելցըրել էր իւր ջերմութիւնը.
 Կիզում էր օդը, կիզում անխընայ,
 Արում էր գետին, կըրակ դարձընում

Ամեն առարկայ,

Ջուրը տաքացնում, գոլորշիացնում,
 Քարը կըրակում, ցեխը չորացնում -
 Իսկ Սօդոմ— Գօմոր էր առաջ բերում:
 Արդեօք իսկապէս այսօր կիզիչ էր,
 Թէ սովորական նոյն արեգակն էր,

Չէր հետաքրքրում այդ Մարկոս աղին,
 Քանի որ ոչ միտք, ոչ խելք կար գլխին.
 Չէր էլ մտածում, որ ամպհովանին
 Ամեն օր բռնած ունէր իւր գլխին,
 Հրաման էր տալիս միշտ բանւորներին,
 Իսկ այսօր՝ կանգնած՝ մշակներէ հետ,
 Բաց արևի տակ, անամպ երկնքին,
 Ամառանօրին, գործում էր, գործում
 Եւ պիտի գործէր, եթէ չէր ուզում

Որ տունը քանդուէր:

VI

Ի՞նչ անէր աղան, էլ ինչ բան բռնէր,
 Որ մի հընարով օր անց կացընէր,

Չէ որ դեռ օր կար, —

Օր անվերջ, երկար:

Եւ նոր գալութի բուռն փղձկումներ
 Ժայթքում էր, թափում իւր գլխի վերայ,
 Իւր ժլատութեան, իւր անկշտութեան,
 Իւր հարստութեան տենչանքի վերայ. —

Չէ որ օրերից բաւական չեղաւ,

Իեռ երկարացնել անշուշտ ուղեցաւ...

Իսկ բանւորներին երբ աչքը զըցեց,

Տեսաւ նորանք էլ հազիւ են շարժում,

Ինքն իրենից սաստիկ ամաչեց,

Գլուխը կախեց ..

«Ասլանի տունը քանդուի իւր գլխին,

Ջսպուած ցատումով ասաց ինքն իրան.

Ես մտածեցի միայն զանդերը

Մի քիչ լեռ զըցել:

Բայց ոչ թէ չմի քիչ», ինչպէս տեսնում եմ՝

Տաս ժամից աւել՝ օրն է լեռ զըցել.

Ի՞նչ անխիղճ մարդ է այդ մարդն երևում,

Միթէ բանւորին չէլ չէ մեղքանում

Ու մանէթներով իւր խիղճը ծախում...
 Եւ ա՛ա նորից գլխում շարուեցան

Վրէժն ու սարսափըն այն դժոխսալին,

Որք նորա ամբողջ ազատութիւնը

Կամքն ու կրքերը կաշկանդում էին.

Կաշկանդում, կոտորում,

Գայթակդում, ճնշում

Ու կրկին նորան գործ լինցընում...
 Եւ Մարկոս աղան իբրև հեշտաեռ

Ինքն իրեն՝ ներսից՝ տաքանում, շարժում,

Եւ շխշուամ, թշուամ, քլթքլթում, բլբում,
 Եւ ուամ, բարձրանում, ուռչում, փրփրում
 Եւ մաղձը կրկին իւր վերայ թափում,

Իւրեան վընասում:

Նա նմանում էր ճնշուած գողորշու,
 Որ ամեն րոպէ պատրաստ էր պալթել,
 Բացուել, լալնանալ, եթերքին հասնել,
 Աղատութիւնը օդի մէջ գտնել...
 Բայց սեղմած, ընկճած աման կողմերից,
 Իրենից զօրեղ շրջապատերից,

Ստիպուած էր հուպ գալ,
 Նոյն դիրքում մընալ:

Եւ ճար չէր գտնում մի կերպ դուրս պրծնել
 Ան գրծոխալին պալմանի միջից,
 Որ նա կամովին, խիստ թախանձանքով
 Կապել էր վիզը ազահութիւնից:

Եւ նորա մտքում ակամայ կամօք

Ծագեց մի նոր բայն:

Մթթէ դրծոխքը կատղել էր վերան...

Արդեօք դեկրը իւր դէմ չէն լարուած,

Իւր դէմ չէն գործում

Ու տանջանքներով իւր շուրջը պատում—
 Եւ վատութիւն, և կիրք, և ցասում,
 Եւ լողնածութիւն, և անտանձ գալուցթ,
 Եւ չուղմունք, և վիշտ, և թախիծ, կսկիծ—
 Սրտի մէջ գըցում, զլիսին կուտակում,
 Հողեպէս ճնշում:

Որ ինքն ըստիպուէր պալմանից շեղուել
 Եւ ամբողջապէս նորանց ճանգն ընկնել...

—

Եւ արդ ուժասպառ տեղափոխում էր

Աննշան քայեր, չնչին մանրուէքներ
 Որպէս զի մի գործ կատարած լինէր ..
 Վերջումն էլ կանգնած մըշակի կողքին,
 Հող էր շաղ տալիս նորա թարախին,
 Որ ցելս դրնելիս չը կպչէր փայտին
 Ու արնապէս բանում, ինքն իրան խաբում,
 Անհասկանալով օրալուկ անում:

Բայց առաջուանից չիմա աւելի

Տանջանք էր դգում, խիստ, սարսափելի.
 Ոչ թէ քարերի ծանրութիւններից,
 Ոչ թէ բռնով հող թարախն ածելուց,
 Այլ խոնարիելիս կամ բարձրանալին:

Փայտ կտրած դիրքը ծալել ու բանալ
Զէր կարողանում.

Եւ ամեն անգամ

Մէջքը կիսուում էր, ճռուում, կոտրուում,
Սիրտը բռնի մէջ կծկուում, տրորուում,
Սուր սուր ցաւերը մինչ զագաթի հասնում՝
Եւ ողջ աշխարհը գլխին խառնուում...

Եւ ամբողջապէս վերլծ քէն դարձած,
Անզուսպ ցաւերից, զայրութից կատղած,
Յիշոց չը մընաց երկրի երեսին,
Որ նա չը թափէր Ասլանի գլխին.
Անէծք, հախոյանք, հրեղէն սուր, սըւնր
Եւ շանթք ու ամպրոպք գոչեց երկն քից
Որ ալդ բոլորը մի՛ ակնթարթում
Ամբողջ զըժոխքը ոչնչացընէր,
Դիւաց լէզիօնին, չար ոգիներին
Տիեզերքի մէջ ցրուէր, հալածէր,

Եւ ինքն ազատուէր:

Բայց քնչ են կարող անել անէծքը,
Շանթք ու ամպրոպքը, սուր սըւաքները,
Որ դուրս են գալիս, լուսահատ սրտից,
Ջախջախուած մարմնից, խիստ տանջուած հոգուց:
— Ի՞նչ գին ոճնէին:

Նա էլ չէր գցում աչքն արեգակին
Հազիւ շարժուում էր ուժերով վերջին.
Ոչ քար էր կըրում, ոչ էլ ցեխ տանում
Ոչ էլ բռնով հող ածում թաքախին.
Ինքն էլ չը գիտէր թէ ինչ էր անում
Գլխին խելք չը կար, սիրտը մաշուում էր,
Հոգին մաղտում էր, ուշքը գընում էր,
Ալ միայն հազիւ ոտքի վրայ կանգնած
Յետ, առաջ գընում, զերդ ապուշ կտրած,
Իբրև ուրուական, իբրև մի ըստուեր...
Միայն գլխի մէջ ազօտ շարժում էր,

Որ լիրբ Ասլանը

Անաստուած խաբեց, իւր տունը քանդեց.
Երեք ժամի տեղ օրը դար շինեց,
Որի սկիզբն ու մէջը միայն նա տեսաւ,
Իսկ վերջը արդեօք կը տեսնթ թէ չէ,
Թէ տեղն ու տեղը հոգին կը փըչէ:

Բայց և անպէս նա ոտքի վերայ էր...
Իսկ քալելն արդէն անպէս էր գըցում,
Դողում, օրորում,
Կարծես, անդունդ էր թոկի վերալով

Անց ու դարձ անուժ.

Եւ թւում էր թէ ամեն մի բոսայէ,
 Ահա, ահա նա վայր պիտի ընկնէր
 Ու անպէս ընկնէր, որ ընկած տեղից
 Երբէք չը շարժուէր...
 Գուցէ և վաղուց ընկած կը լինէր,
 Եթէ Ասլանի տուած երկիւղը
 զըլխում չը լինէր.

—

Արդ՝ այդ երկիւղը առատ նիւթ տուեց
 Մեր Մարկոս ազի յոգնած ուզեղին
 Եւ զառաջանքի մէջ նորան գըցեց,
 Որ լատուկ էր իւր խոնջացած մարմնին:
 Ահը բորբոքուեց,
 Հազար գոցներով առջևը շարուեց...
 Եւ հետզհետէ ամբողջ դըժոխքը,
 Վարձես նորա դէմ կանգնեց, խոճուեց...
 Եւ թւում էր թէ՛ մեր Մարկոս աղին՝
 Որ դիւաց վշտեր վերան թափուեցին,
 Վուրժքը սեղմեցին, վիզը խեղդեցին
 Պասպալուած բերնի թանձրացած թուքը
 Կուլ տալ չը թողին

Եւ ազատ շունչը իբր արդեւեցին...
 Թւում էր նորան՝ անհամար ոգիք
 Մեծ մեծ խմբերով պար բռնած շուրջը,
 Հուր արեգական ճառագայթներից
 Գործում են շանթեր, խըրում մարմինը.
 Մըմուռուով, դողով, կսկիծով, տենդով
 Ացնում են նորա ողջ անդամները...

Թւում էր նորան՝ որ սկանջներում
 Հանդիսաբը դադրեց. խշշում են, սուլում,
 Վարձես, լուռ անէծք, լիշոց բարբաջում
 Եւ խուլ քրքիջով վերան ծիծաղում...
 Թւում էր նոյնպէս՝ որ ինքը կանգնած՝
 Արևի լուսից վառում էր, պլուում;
 Իսկ իւր նոր շէնքը փըլատակների
 Վիթխարի կոտեր աչքին երևում...

Վարձես, խաժամուծ դնդերը չարաց
 Բաշքաշում էին, բըթբըթում, հրում,
 Ոտերին քարով, փայտով հարուածում,
 Գնկները կոտրում,
 Մէջքը բահերով, լինգերով շարդում,
 Գլխին քըլունգի սուր ծայրով խըրում,

Որ լաջողէին մի կերպ վայր դցել,
Գետին գլորել,
Ոտքի տակ անել...

Բաց դիմադրում էր մեր Մարկոս աղան
Վերջին ուժերով իբր պաշտպանուում
Եւ ոչ մի կերպով վայր ընկնել գետնին
Նա չէր կամենում:

—
Նրբ երեկոյան

Ժամի զանգերը հնչեցրին,
Զերմեռանդ մարդոց ժամ հրաւրեցին,
Իսկ բանասերներն ճանգիտ բերեցին—
Մեր Մարկոս աղան, կարծես, խոր քրնից
Արթնեց, ըսթափուեց:

Իւր ականջներին հաւատ չընծաւեց,
Խելագարի պէս իւր շուրջ նաւեց...
Բաց երբ որ տեսաւ, տեսաւ, համոզուեց,
Վարպետը պատից իջաւ, լուացուեց
Ու մըշակները գործը թողեցին.
Եւ երբ իւր գլխում աղօտ լուս ծագեց
Թէ ամբողջ օրը ստերի վերայ
Ռեանւորների հետ հաւասար բանեց
Զարաց փորձանքը վրայից թօթափեց
Ու միամտուեց—

Յաջնժամ սիրտն ուժգին, ուժգին բարախեց
Բարախեց... խրեց...
Թուր թէ դադրեց...

Գլուխը ծանրացաւ, ոտքը թուլացան,
Մնկները միջից երկուտակուեցան,
Լուսն աչքերի մէջ աղօտեց, մթնեց,
Ուղեղը շաղուեց... երկիրը դողաց—
Շարժուեց, բարձրացաւ, լողաց, սառանեց.
Տարածութեան մէջ, պըտուտներ արեց
Ու երկինք, երկիր իրար խառնուեց...

Եւ այնուհետեւ մեր Մարկոս աղան
Ոչինչ էր չիչեց:

Հետեեալ օրը մեր Մարկոս աղան
Քրնից զարթնեցաւ, աչքը բաց արեց,
Իսկույն վեր թռչել տեղից ուղեցաւ,
Որ գընար փողոց շուտ բանւոր վարձէր:

Օրը չ'անցկենար ու գործն ըսկըսէր.
 Բայց շարժուել տեղից նա չը կարեցաւ,
 կարծես, անկողնուս կալ ու կապուեցաւ.
 Ոչ ձեռք ու ոտքը, ոչ ամբողջ կազմը
 շրպատակեցին նորա ձգտմանցը,
 Ուժը խորտակուած, մարմինը ջարդուած,
 Տնքում, ցաւում էր սոջ գոռութիւնը:

Մի առ ժամանակ մոլորուած մընայ...
 Նալեց իւր շուրջը, նալեց արեւին—
 կէս օր էր արդէն—և իւր աչքերին
 Նա չը շաւտայ...

Բայց կամաց կամաց իբրև մի երազ
 Սկըսեց լիշեւ երեկուալ դէպրը...
 Յիշեց թէ ինչպէս նա բան էր անում...
 Խակ լեռնի... ինչպէս լոգնածութիւնը
 ձնշում էր նորան ողջ էութիւնը.
 Բայց լեռնոյ... լեռնի... ինչպէս վերջացաւ...
 Ի՞նչպէս անկողին և երբ նա մըտաւ...
 Ինչո՞ւ էր բանում.. ինչն էր պատճառը...

Եւ հետզհետէ աչքերի առաջ,
 Իբրև ուրուական կանգնեց Ասանը...
 Մաքից վերացաւ խիտ մ. ուսիւղը.
 Պատկերը բացուեց, ամեն ինչ պարզուեց.
 Յիշողութիւնը սոջ վերականգնեց:
 Եւ անմիջապէս որոշեց կր'ին
 Դիմել Ասլանին:

Ասլանը եկաւ:
 —Քու տունը քանդուի, այս ինչ արեցիր.
 Այս ինչպէս օրի դու ինձ հասցըրիր:
 Եւ պատմեց նորան զխիսն եկածը,
 Իւր դըրութիւնը, իւր զգացածը.
 Յետոյ ջերմագին խնդրեց որ շուտով
 Ամեն մի միջոց, հրնար գործ ածի,
 Օրերն առաջուալ դիրքի մէջ դընի:
 Ասլանը հասաւ իւր նպատակին՝
 Գրպանը գցեց ձիւտ յիսուն բուբլին:

Եւ աշուհեան մեր Մարկոս աղան,
 Եւ չէր վրդովւում զանգի հնչումից.
 Ընդ միշտ զարձաւ մուղմ, հանգիստ, գլխալից,
 Գոհ մըշակներից:

ԷՄԻՆ ՏԵՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՏ